

XVII ԴԱՐԻ ԲԱՆԱՍՏԵՂՄ ԶԱԿՈՐ ՍՍԵՑԻ

Հ. Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

Հակոբ Սսեցու ստեղծագործությունն իր թեմատիկայով և բանաստեղծական մի շարք առանձնահատկություններով հետաքրքիր է որպես XVIII դարի գրականության բնութագրական հատվածներից մեկը:

Ինչպես այս ժամանակաշրջանի հեղինակների մեծ մասի, այնպես էլ Հակոբ Սսեցու կյանքի և գործունեության մասին քիչ բան է հայտնի բանասիրությանը:

Սսեցու անունն առաջին անգամ հիշատակում է Ղ. Ալիշանն իր «Սիսուան»-ում, երբ տալիս է Աջպահյան ազգաբանական տախտակը: Ըստ այդ տախտակի Աջպահյան Հակոբ երեցը Եղիազար երկրորդի որդիներից մեկն է: Ալիշանն այս տեղը Հակոբի մասին տողատակ ծանոթություն է տալիս, ասելով, թե «սուր սա Հոնտոր Սսեցի, ոչ զիտեմ վասն որպիսեաց բանից, միայն երգք ինչ նորա ծանոթ են ինձ...»² և բերում է իր կարծիքով նրան պատկանող յոթ տաղերի սկիզբները:

Երկրորդ անգամ Սսեցու մասին հիշատակում է Բ. Կյուլենսերյանն իր «Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ» աշխատության այն հատվածում, որում խոսում է Կիլիկիայի Մինաս Քացախ կաթողիկոսի մասին⁴: Կյուլենսերյանը նշում է, որ Հակոբ Աջպահյան Սսեցին եղել է Մինաս կաթողիկոսի ժամանակակիցներից մեկը⁵ և մեջ է բերում Ալիշանի ասածը նրա մասին, միայն մի դիտողություն՝ թե «Հոնտոր րսված է պարզապես տաղասաց ըլլալուն»:

Նշելով «Արարատ» հանդեսում հրատարակված Սսեցու մի հիշատակարանից⁶, որ նա թողել է էջմիածնի Ն՝ 892 ձեռագրում⁷, Կյուլենսերյանը եզրակացնում է, թե Սսեցին «Այրիացած է և յետոյ վանք մտած և փակակալ եղած ս. Լուսաուրշի»⁸:

Ն. Ծովակալան է, որ առաջին անգամ Հակոբ Սսեցուն նվիրել է մի առանձին հղված «Յակոր երէց Աջպահ Սսեցի և իւր պատմական մէկ ոտանաւորը» խորագրով⁹: Այստեղ նա ի մի է բերել

1 Աջպահ կամ Աջպահյան անուն էր կրում այն զերդաստանը, որի ձեռքին էր Սիս քաղաքում գտնվող հայտնի «սրբություններից» մեկը՝ Գրիգոր Լուսավորչի կարծեցյալ աջի պահպանությունը: Այս զերդաստանի ծագումը, ըստ ավանդության, զալիս է Հեթում Բ թագավորի եղբայր Հովհաննես Եպիսկոպոսից (տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հատոր Ա, Իրևան, 1959, էջ 1057):

2 Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 19—20:

3 Ալիշանի նշած այդ տաղերից միայն երեքն են իսկապես Սսեցունը, իսկ շորսը նրանք չեն, այլ մեկը՝ Երուսաղեմի զովհր, Հակոբ Թոխաթցու երկն է, երկրորդը՝ «Գարունն է բացվեմ վարդն ի պաղանին» սկզբածրով սխալմամբ վերագրվել է Հակոբ Արծկեացուն (տե՛ս Կ. Կոստանյանց, Նոր ժողովածու, Բ պրակ, էջ 16—19), բայց փաստորէն Գրիգորիս Աղթամարցու գրչին է պատկանում (տե՛ս Գրիգորիս Աղթամարցի, Տաղեր, Իրևան, 1963, էջ 208), իսկ երկուսը մեզ անծանոթ հեղինակների տաղեր են:

4 Տե՛ս Բ. Կյուլենսերյան, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ, Անթիլիաս—Լիբանան, 1939, էջ 299—304:

5 Մինաս Քացախը կաթողիկոս է եղել 1621—1632 թթ.:

6 Տե՛ս «Արարատ», 1888, էջ 347:

7 Այժմ Մաշտոցի անվան Մատենադարանի Ն՝ 679 ձեռագիրն է: Պաշտ հայտնի «Ճաշոց» է, գրված 1286 թ. Լեոն Գ-ի որդի պարոն Հեթումի համար: Ձեռագիրը պատմական առումով կարեւոր մի հիշատակարան ունի հայոց կիլիկյան թագավորության ծագման ու զարգացման մասին:

8 Սսեցին այս «Ճաշոց»-ի 475ր էջի տողատակում գրել է. «Ի հայրապետութեանս Տէր Մինաս կաթողիկոսին՝ թուականս Հայոց ԹՇԷ (1628) նուաստս լամենայնի Յակոր Սրսեցի, որ յայժմ եմ փակակալ ի դռն սուրբ Լուսաուրշի. ի Կիլիկիայ այսմ որ ի Մարաստան ասի, ր. և գ. (երկու երեք) եղրոր հետ ելայ զնացի սանյրխով. թուական նորայ որ ի դուան վերայ կայր կարգացիս: Սա տպված է նաև «Սիսուան»-ում, էջ 223:

9 Տե՛ս «Հասկ», Անթիլիաս—Լիբանան, 1945, Ն՝ 1—2, էջ 28—30:

Սսեցու մասին մինչ այդ եղած տեղեկությունները, տվել նրա երկերի համարյա լրիվ մատենագրությունը և հրատարակել «Շարադրութիւն վարդապետաց Հայոց ի Գօշայ հետէ ոտիւ շափեալ, ըստ անուն երգողի շափուլի» խորագրով ոտանավորը¹⁰,

Հետագա քայլը կատարել է Աս. Մնացականյանը, հրատարակելով Սսեցու «Վասն պախարակելոյ օրինազանցիցն» խորագրով բանաստեղծությունը¹¹, Դրա ծանոթագրության մեջ մի շարք տեղեկություններ հաղորդելով նրա երկերի մասին, ինչպես նաև պարզելով մի քանի ոտանավորներում բառախաղերով թաքցված թվականները, նա դալիորեն լրացրել ու հարստացրել է Սսեցու կենսագրականը, Այսպես, նա պարզել է, որ Հակոբ Սսեցու «Յայտնում բանից քոց լուսաւոր» տողով սկսվող բանաստեղծությունը հորինված է 1643¹², «Այ անգին դոհար» տողով սկսվող բանաստեղծությունը՝ 1636¹³, «Այս տաղ դուսական Ակոր լեզուն» տողով սկսվող բանաստեղծությունը՝ 1649¹⁴ և «Վասն պախարակելոյ օրինազանցիցն» բանաստեղծությունը՝ 1642¹⁵ թթ.:

Սսեցու «Տաղ ազնիւ ասացեալ Յակոբ վարդապետէ ի վերայ քաղաքին Բուզանդիոյ և է տունըս «ղարչնֆիլ, ներկիզ» խորագրով բանաստեղծության¹⁶ վերջին քառյակում դրա գրության թվականն ասվում է ոչ թե բառախաղով, այլ ուղղակիորեն՝

Տարուան լուծ բիրն Թորգոմ դարայ է
Հազար ունուսուն բոյավրն շինէ...

այսինքն՝ 1099, որը հավասար է 1650 թ.:

Սսեցու «Շարադրութիւն վարդապետաց Հայոց ի Գօշայ...» երկի հորինման թվականն էլ 1635-ն է («Բ» և «Դ»)¹⁷,

Այսպիսով, ստացվում է, որ նա ոտանավորներ է հորինել 1635, 1636, 1642, 1643, 1649 և 1650 թթ.:

Քանի որ «Այ անգին դոհար» տողով սկսվող բանաստեղծությունն ըստ Ա. Սուրմեյանի ծանոթագրության¹⁸ հորինված է Սսեցու կնոջ մահվան կապակցությամբ, ապա այստեղից Մնացականյանը եզրակացնում է, որ եթե 1636 թ. նա արդեն ամուսնացած և կնոջից էլ զրկված է եղել, ապա «դրա հիման վրա կարելի է պնդել, որ Հակոբ Սսեցին ծնվել է մոտավորապես 1600-ական թվերին...»¹⁹,

Իհարկե, Աս. Մնացականյանի փաստարկը բավականաչափ վիճելի է, քանի որ Սսեցին կարող էր այրիացած լինել ոչ թե 30—35 տարեկան, այլ ավելի երիտասարդ կամ ավելի ծեր հասակում: Մյուս կողմից, ինչպես վկայում է վերը հիշատակված «Ծաշոց»-ի հիշատակարանը, Սսեցին այրի է եղել արդեն 1628 թ., քանի որ միայն այդ դեպքում նա կարող էր լինել ս. Լուսավորչի վանքում և վարել փակակալի պաշտոնը: Բայց որ Սսեցին ծնված պետք է լինի 1600-ական թվական-

¹⁰ Տե՛ս «Հասկ», 1945, № 1—2, էջ 30—31:

¹¹ «Անտիպ էջեր միջնադարյան հայկական պոեզիայից» հոդվածին կից (տե՛ս Մատենադարանի «Գիտական նյութերի ժողովածու», № 2, Երևան, 1950, էջ 193—195):

¹² Բանաստեղծության վերջում եղող «Յուցանէլ զայս թիւ Թորգոմայ Առ ադ շինէ քանակ սորայ» տողերից որպես թվական ընդունելով «Առ ադ»-ը, Մնացականյանն ստանում է 1643 (1092+551) թվականը:

¹³ Այս բանաստեղծության վերջում եղող «Զեռ շինէ թուին» բառերից էլ վերը նշված ձևով վերցնելով «Զեռ» բառը («շինէ»-ն հեղինակի հրահանգն է թիվը շինելու, գտնելու մասին), Մնացականյանն ստանում է 1636 (1085+551) թվականը:

¹⁴ Այս բանաստեղծության «Ղարաբաբա կապ թրւական Հայուն» տողից էլ ճիշտ կերպով վերցնելով միայն «ղարաբաբա» ծածկագիր բառը և այն ուղղելով որպես «զառաբաբա», Մնացականյանն ստանում է 1649 (90+1+1000+1+2+1+2+1+551=1649) թվականը:

¹⁵ Ըստ Հ. Տաշյանի ձեռագրացուցակի Վիեննայի № 382 ձեռագրում գտնվող այս բանաստեղծության մի այլ տարբերակում կա «թիւ ՂԱ եղև և ի քնոյ զարթիր» տողը (էջ 791): Մնացականյանը ենթադրում է, որ դա պետք է լինի 1091 և ստանում է 1642 (1091+551) թվականը:

¹⁶ Տե՛ս Ա. Սուրմեյան, Յուցակ Հայերէն ձեռագրաց Հալկաի..., Երուսաղեմ, 1935, էջ 382—383, մասնավոր ձեռագիր № 28, էջ 25:

¹⁷ Տե՛ս «Հասկ», 1945, № 1—2, էջ 31:

¹⁸ Տե՛ս «Յուցակ Հայերէն ձեռագրաց Հալկաի», էջ 82:

¹⁹ «Անտիպ էջեր միջնադարյան հայկական պոեզիայից», էջ 195:

ներին, կարելի է ենթադրել՝ նկատի ունենալով 1635 թ. գրած նրա բանաստեղծությունը, որոնք ակնհայտորեն երիտասարդ մարդու գրած սիրային ոտանավոր է։

Կարևորը, սակայն, մնում է այս, որ նա ապրել ու ստեղծագործել է XVII դարի առաջին կեսին՝ 1635—1650 թթ.։ Իսկ այս մեզ հնարավորություն է տալիս նրա ստեղծագործությունը դիտել տվյալ ժամանակի բանաստեղծության ընդհանուր համապատկերի մեջ ու բաղդատության մեջ դնել նույն ժամանակաշրջանի մյուս բանաստեղծների երկերի հետ, մի բան, որը կօգնի նրա րաստեղծագործությունը ճիշտ գնահատելու գործին։

Սսեցին իր կյանքի հիմնական մասն անց է կացրել հայրենիքում։ Այդ բանը շատ լավ է երևում նրա հիշատակագրություններից ու երկերից։ Այսպես, 1628 թ. հիշատակարանը դրված է Սսում, 1643 թ. հորինված «Յայտնում բանից քոց լուսաւոր» տողով սկսվող բանաստեղծության վերջում էլ գրված է.

Է՛լ, Տէր Դիզուր, ես լեզ մեղայ.

Առեւ ծերոյդ ես սոխազայ.

Յոտմ հանի գրանս վանմն Սոսայ.

Առ ոտ Շմաւոն կաթողիկոսայ։

Այս տողերից երևում է, որ նա այդ ժամանակ նույնպես Սսում է գտնվել։ Հետագայում նա դուրս է եկել իր հայրենիքից և եղել է Ղարասուում, Կ. Պոլսում և գուցե այլուր։ Այդ բանն են ապացուցում 1649 և 1650 թթ. Ղարասուին և Կ. Պոլսին նվիրված նրա ոտանավորները։ Սակայն այդ ոտանավորների բնույթն ու ոգին մեզ հուշում են, որ նա այդ քաղաքներում երկար չի ապրել, այլ պարզապես ճանապարհորդել է և գրել նրանցից ստացած իր տպավորությունները։

Սսեցու բանաստեղծությունների հորինման ժամանակների հշտումը, ինչպես նաև դրանց տնազույս հողող բանականոր (աքրոստիխ) և վերջին հիշատակարանային քառյակները մեղ հնարավորություն են տալիս պարզելու նաև, թե նա ե՞րբ և ինչպիսի՞ հոգևոր պաշտոն, աստիճան կամ կոչում է ունեցել։ Այսպես, եթե 1626 թ. նա նշում է, որ «փակակալ» է, ապա 1636 թ. հորինված «Ա՛յ անգին գոհար» բանաստեղծության տնազույս տառերի հողած «Ակոր էրէց» բառերից իմանում ենք, որ նա այդ ժամանակ քահանա է եղել, իսկ «Ոտանաւոր վասն ցուցանելոյ զերգող շարականաց» բանաստեղծության տողերից կազմված «Յակոր վարդապետ Սրսցոյ խնդիր Յոհան էրէց» բանակապը մեզ ասում է, որ 1643 թ. նա արդեն վարդապետ է կոչվել։ Վարդապետ խորջորջումը կարդում ենք նաև 1649 թ. հորինված՝ «Այս տաղ գուսական Ակոր լեզուն» բանաստեղծության վերջին՝

Իսկ և ես եկի ի յայնիս Սոսումն.

Աչսլահ վարդապետ Յակոր սոսկ բարուն,—

տողերում։

Թե մինչև ե՞րբ է ապրել նա, հետագայում որտե՞ղ է եղել և ինչո՞վ է զրադվել, առ այսօր հայտնի չէ բանասիրությանը։ Հայտնի չեն նաև նրա կրթության հանգամանքները։ Միայն նրա բանաստեղծություններից երևում է, որ նա կանոնավոր հոգևոր կրթություն է ստացել և լավատեղյակ է եղել մեր անցյալ դպրությանը։

* * *

Թեև Սսեցու երկերից քիչ բան է հասել, ընդամենը 7 բանաստեղծություն²⁰, բայց այդքանն էլ շատ բան է ասում դրանց հեղինակի հետաքրքրությունների, աշխարհայացքի, ինչպես նաև գրելաձևի հիմնական սկզբունքների մասին։

Օսմանյան բռնապետության բազմակողմանի ճնշումների և հալածանքների, բոնի հավատափոխության շփուլացող քաղաքականության պայմաններում, սեփական ժողովրդի ինքնությունը պահպանելու հիմնական կովանը XVI—XVII դարերի գործիչները, այդ թվում և Սսեցին, համարում էին քրիստոնեական կրոնը։ Ազգային լեզվի և հավատի պահպանմամբ նրանք ցանկանում էին թույլ չտալ հայ ժողովրդի ձուլումը, նրա տարրալուծումը մահմեդականության հոծ զանգվածի մեջ։ Դրա համար էլ այս ժամանակաշրջանի գործիչների ստեղծագործություններում քրիստոնեա-

²⁰ Դրանցից միայն մեկը՝ «Յառ ի մէջ գետից» սկսվածքով (գրված 1636-ին), մեր ձեռքի տակ բոլորովին չի եղել (այս ոտանավորի մասին գրում է Ն. Մովսէսյան իր վերը հիշատակված հոդվածում, նշելով, որ այն գտնվում է Նրուսաղեմի ս. Հակոբա վանքի մատենադարանի № 68 գրչագրում։ Սակայն նշված ձեռագրում Սուրմեյանի ձեռագրափոխակի մեջ այդպիսի երկ չի նշվում)։

կան կրօնի քարոզը, դրա սկզբունքների և դոգմաների սյուշուպանությունը, ինչպես նաև քրիստոնեական եկեղեցու կարգ ու կանոնի վերահաստատման նպատակ ունեցող երկերը պետք է դիտել ոչ միայն որպես նրանց կրօնական աշխարհայացքի, այլ նաև, և թերևս շատ ավելի, որպես նրանց քաղաքական հայացքների, քաղաքական պայքարի սկզբունքների արտահայտություն:

Այս հայացքների ու սկզբունքների կոնկրետ դրսևորումներն են հենց Սսեցու «Բանաւոր վասն ցուցանելոյ զերգող շարականաց»²¹ և «Շարադրութիւն վարդապետաց Հայոց ի Գօշայ հետէ ոտիւ չափեալ, ըստ անուն երգողի և չափողի»²² խորագրով բանաստեղծությունները:

Սրանցից առաջինում նա մեկ առ մեկ թվարկում է բոլոր այն հեղինակներին, որոնք շարականներ են հորինել, իսկ երկրորդում մանրամասն ներկայացնում է հայոց վարդապետական երկու ճյուղերը, այսպես կոչված «զավազաններ», սկսած Մխիթար Գոշից:

Թվարկելով շարականներ հորինողներին՝ Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի, Խորենացու, Հովհան Մանդակունու, Անանիա Շիրակացու, Հովհաննես Երզնկացու, Լամբրոնացու, Կոմիտասի, Ներսես Շնորհալու, Գրիգոր Մագիստրոսի, Օձնեցու, Մտեփաննոս Մոկացու, Խաչատուր Կիչառեցու, Ստեփաննոս Սյունեցու և այլոց, և նշանավոր վարդապետների՝ Մխիթար Գոշի, Գրիգոր Տաթևացու, Եսայի Նշեցու, Հովհան Որոտնեցու և ուրիշների անունները, ու համառոտակի ծանոթացնելով վերջիններին աշխատություններին, կատարած գործերին, Սսեցին ցանկանում էր իր ընթերցողների հիշողության մեջ թարմացնել հայ ժողովրդի դպրությունը և եկեղեցու պատմությունը: Իսկ պատմության ու կրօնական դրույթների վերհուշը, քրիստոնեության ամրապնդման հետ մեկտեղ, ժամանակակիցներին հայրենասիրական արժանապատվության ոգով կրթելու, դաստիարակելու նպատակ ունենալ:

Ուտանավորների այս ընդգծված նպատակայնությունը, ուսուցողական բնույթը և ընդգրկած նյութը հնարավորություն չեն տվել դրանք պատկերավոր ու բանաստեղծական դարձնելու: Ավելի ճիշտ կլինի ասել, որ հիշյալ ուտանավորները հեղինակի փայփայած գաղափարների արտահայտությունը լինելով, այնուամենայնիվ բանաստեղծական ներշնչանք չեն տվել նրան: Դրա համար էլ այդ երկերը չեն դարձել իսկական, լիարժեք բանաստեղծություններ, այլ մնացել են որպես տվյալ նյութի չափածո շարադրանքներ միայն:

Տաղաչափական տեսակետից ևս սրանք ա՛րքի չեն ընկնում ոչ նորությամբ, ո՛չ ճոխությամբ և ույնահանգ են և հորինված են հոգևոր հեղինակների շատ սիրած 3-վանկանի երկանդամ յամբական ուտանավորների ձևով ու նրանցից առած բանաստեղծական հնարանքներով:

Սրանց մեջ ուշագրավը թերևս միայն այն է, որ նույնիսկ այսպիսի նպատակային երկերը միշտ չէ, որ հորինված են մաքուր զրարարով, այլ հաճախ դրանց մեջ զգացվում են բարբառային տարրեր, ինչպես, օրինակ, «կու գայ», «կու խնդրէ» ձևերը: Սրանցում կան նաև առհասարակ ժողովրդի խոսակցական լեզվին հատուկ որոշ արտահայտություններ, օրինակ, «Սուղ թէ մնաց, նշան չըկայ» տողում «նշան չկան» ժողովրդական «նշան չունի» արտահայտությունն է:

Որքան էլ առաջին հայացքից տարօրինակ թվա, ի վերջո քրիստոնեության ամրապնդման, նրա խախտվել սկսած բարոյախոսական սկզբունքների վերահաստատման նպատակին է ուղղված նաև Սսեցու «Վասն պախարակելոյ օրինազանցիցն» խորագիրն ունեցող բանաստեղծությունը²³: Սսեցին այստեղ պախարակում է բոլոր նրանց, ովքեր խախտում են քրիստոնեական կրօնի օրենքները, ովքեր շեղվում են քրիստոնեական բարոյախոսության հաստատած դրույթներից ու սկզբունքներից: Նա նման օրինազանցության փաստեր է տեսնում ժամանակի հասարակության բոլոր խավերի մեջ: Բայց և ցավով նկատում է, որ հոգևորականությունը, ձկսած ամենացածր աստիճանի վրա կանգնած սարկավազից մինչև պատրիարքը, հեռացել է այդ օրենքներից ու պատվիրաններից:

21 Գտնվում է Մատենադարանի № 3107 (էջ 137բ—139ա) և № 7217 (էջ 70ա) ձեռագրերում: Ըստ այս ձեռագիր օրինակների տպագրված է Հ. Անուշյանի «Հայկական մատենագիտություն» աշխատության «Մատենագիտական բնագրեր» բաժնում (էջ LXXII—LXXIV):

22 Այս ուտանավորը Ն. Մովսեկյանը հրատարակել է իր «Յակօք երէց Աշպահ Սսեցի և իւր պատմական մէկ ոտանաւորը» հոդվածին կից (տե՛ս «Հասկ», 1945, № 1—2, էջ 30—31) այն հանելով «Յրուսաղեմի ու Հակոբա վանքի մատենադարանի № 68 ձեռագրից»:

23 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռագիր № 41, էջ 156բ—157ա և № 8482, էջ 1բ—2ա: Նշված ձեռագիր օրինակների համեմատությամբ հրատարակված է Աս. Մնացականյանի «Անտիպ էջեր միջնադարյան հայկական պոեզիայից» հոդվածին կից (տե՛ս Մատենադարանի «Փիտական նյութերի ժողովածու», № 2, էջ 193—194):

Իրավացիորեն չեղտելով, որ օրինազանցությունների մեծ մասը արմատոր շահամոլությունն ու ընչաքաղցությունն է, Սսեցին առանց վարանման ու այլարանության հայտարարում է, որ հոգեվորականներից, հատկապես բարձրաստիճան հոգևորականներից շատերը այլևս ոչ թե եկեղեցու մաքրակրոն սպասավորներն ու անշահախնդիր «հովիվներն» են, այլ կաշառակերներ ու խաբեբաներ, որոնց համար ոչ մի սուրբ բան չկա.

Վարդապետն ալ Բաբոգո շեն,
Ժողովրդեան կաշառի խնդրեն,
Այն որ շտա՝ կու հալածեն,
Այ՛ դաս ու Բաբոգ, հայիֆ սենի:

Առաջնորդներն կանոն չի բռնեն,
Կաշառի համար կանոն ծրոնեն,
Ճեղնաղբածին հարցում շտոնեն,
Այ՛ աստիճան, հայիֆ սենի:

Ուրադրավ է, որ ցածրաստիճան հոգևորականության կատարած օրինազանցությունների մեջ Սսեցին այդքան զազրելի բաներ չի տեսնում: Դ՛իշտ է, նա նրանց ևս պախարակում է տգիտության, իրենց դիրքին ու դործին անարժան, անպատրաստ լինելու, ամբարտավան ու հանդուգն վարքի համար: Բայց ակնհայտ է, որ հեղինակի գայրույթը շատ ավելի բարձրաստիճանների դեմ է ուղղված:

Բացի հոգևորականությունից, Սսեցին պախարակում է նաև աշխարհիկ ֆեոդալներին՝ իշխաններին, նրանց կատարած օրինազանցությունների և անիրավությունների համար:

Թաիգ ւ իշխանն ոման լաւ չեն,
Ըզկաշառն արմաղան կոչեն,
Չտուղին շոխտան դենեն,
Այ՛ հարամխոն, հայիֆ սիգի:

Սսեցին ներողամիտ է, երբ խոսում է ժողովրդի մեջ արմատավորված վատ դժերի, բրիստոնեական բարոյախոսությունից շեղումների, նրա Էկզրունքներից հեռանալու մասին.

Կլսի ժողովուրդն զայրակղեցան,
Եւ այլ՝ զաւրկնսն մոռացան,
Շատն՝ ըզհաւատն ուրացան,
Սուրբ աւագան, հայիֆ սենի:

Աֆիոն կլնուն, քութուն խմեն
Եւ զաղ ու հացն ապականեն,
Ոչ կու վախեն, ոչ կամաչեն,
Ուրանմազլար, հայիֆ սիգի:

Ակնհայտ է, որ պախարակելով հանդերձ, հեղինակն զգացնել է տալիս, թե հոգևորականների կատարածների համեմատությամբ սրանց արածները ավելի անմեղ ու անշար են, որ դրանից շատ ավելի իրենք՝ կատարողները և ոչ թե շրջապատի մարդիկ են տուժում: Եվ ապա, որ այդ արարքների մեծ մասի համար ոչ թե ինքր ժողովուրդն է մեղավոր, այլ նրա «դաստիարակները», այսինքն՝ դարձյալ Էկեղեցու հայրերը:

Սսեցու այս ոտանավորում առկա է մասնավորապես հոգևորականության՝ իր ժամանակի ներկայացուցիչների վարքի, նրանց անօրեն ու անարժան գործողությունների նկարագիրը: Այսպես, օրինակ, նա անդրադառնում է էջմիածնից Արևմտյան Հայաստանի դավառները ժամանած նվիրակների վարքին.

Այն անիւրաւ նութեակնուն՝
Տանիկի բախտով ձի կու հեծնուն,
Շարժմունքն ամլնն զլտ օսմանցուն,
Այ՛ սուրբ մեռուն, հայիֆ սենի:

Թվում է, թե այստեղ շատ բան չի ասված, թվում է, թե միայն գայրույթ կա այն բանի դեմ, որ նրանք տանիկի ձևով են հագնվում ու շարժվում: Բայց այդ տողերի ենթարևագրում շատ բան է թաքնված: Նույն հենց այն, որ նվիրակներին էա «անիրավ» է անվանում, ցույց է տալիս, թե նրանք, հակառակ իբեց «սուրբ» կոչման, անիրավ ու անօրեն գործերով են զբաղվել (բառյակի վերջում «սուրբ» մեռունի՝ հակադրությունը նվիրակների վարք ու բարքին նույնպես այդ է ապացուցում): Բացի այդ, նվիրակների փարթամ ապրելակերպի նկարագրի տակ թաքցված է մեռունի վաճառքի ժամանակ նրանց կատարած ահուկ շարաշահումների փաստը:

Նույն ձևով Սսեցին անդրադարձել է նաև ժամանակի պատրիարքների կատարած օրինազանցություններին.

Պատրիարքներն իբար անկան,
Քսան բիւր եղի սլաւո՞ւն ի լման.
Վէլնն ու կոիվրն մաշեաւն.
Ա՛յ սուրբ արուո, հայիք սէնի:

Այստեղ հեղինակը թեև սեղմ, բայց դիպուկ կերպով քննադատում է XVII դարի կեսերին Կ. Պոլսի և Նրուսադեմի պատրիարքների միջև եղած վեճերն ու կռիվները, երբ նրանցից յուրաքանչյուրն իր դիրքն ամրապնդելու, նոր պաշտոնների տիրանալու համար, խոշոր դումարների կաշառքներ տալով թուրք պաշտոնյաներին, հսկայական պարտքեր էր կուտակել պատրիարքարանների վրա:

Այսպիսով, իրադարձությունների ճշմարտացի վերարտադրության շնորհիվ Սսեցու այս ոտանավորը զգալի ճանաչողական արժեք, որոշակի պատմական նշանակություն է ստացել. և հենց այդ պատճառով էլ որպես վավերական փաստաթուղթ օգտագործվել է այդ շրջանի պատմությունը ներկայացնող այնպիսի արժեքավոր ուսումնասիրության մեջ, որպիսին Աշ. Հովհաննիսյանի «Դրվագներ հայ աղատագրական մտքի պատմության» աշխատությունն է²⁴:

Ի դեպ, ժամանակի կոնկրետ իրադարձությունների լուծանահավատ արտացոլմամբ և հոգեվորականության ճշմարտապատում կերպարի ստեղծմամբ Սսեցու այս երկը սերտորեն առնչվում է Սիմեոն Լեհացու «Վիպասանութիւն նիկոլական» և համանման բովանդակություն ունեցող մի շարք անանուն հեղինակների այն գործերի հետ, որոնցում մերկացված են հոգևորականության բարքերը XVI դարի վերջում և XVII դարի սկզբում:

Նրա նպատակը, ինչպես արդեն երկի խորագիրն էլ ցույց է տալիս, օրինազանցների սրակ պախարակումն է: Նրան՝ իր ողջ էությանմբ քրիստոնեական կրոնին և եկեղեցուն նվիրված մտածողին ու գործչին, մինչև հոգու խորքը խոցել են այն բոլոր երևույթները, որոնց մասին նա չդիմացել է: Նա խորապես վշտացել է տեսնելով հատկապես հոգևորականության անվայել բարքը:

Սակայն անկախ նրա այդ անձնական ցանկությունից, իրականության ճշմարտացի վերարտադրության շնորհիվ երկը փաստորեն դարձել է ժամանակի թե՛ աշխարհիկ և թե՛, հատկապես, հոգևոր տիրակալների սուր մերկացում ու քննադատություն:

Սսեցուց մեզ հասած ոտանավորներից հետաքրքիր են նաև նրանք, որոնք նվիրված են իր այցելած վայրերի նկարագրությանը: Դժբախտաբար մեր ձեռքի տակ դրանցից եղել է միայն մեկի լրիվ քնագիրը՝ «Այս տաղ գուսական բեր Ակոբ լեզուն» տողով սկսվող բանաստեղծությունը²⁵, որը նվիրված է Ղարասուին:

Ինչպես և պետք էր սպասել, հոգևորական Սսեցու ուշադրությունը Ղարասուում ամենից առաջ գրավում են եկեղեցիներն ու ժամատները, նա մեկիկ-մեկիկ թվարկում է դրանք, համառոտակի նկարագրում և նշում դրանց սպասարկող հոգևորականների անունները:

Կայ տէր Վարդանայ, տէր Թորոսն ի նոյն,
ԸՍտեփանն, բեն տէր Յովսեփ Սրսէցոյն,
Տօվհաննէս Լուկ հիմի Ղարասուն.
Տես, նէլէր տեսեր նա ի Ղարասուն:

Կասէ քէ տեսայ անդ մեծ ժամատուն,
Բլն խորանի մէջ մեծն Օգստէն սրբոյն,

Ձախ սուրբ Մինասայ արագահասոյն.
Տես, նէլէր տեսեր նա ի Ղարասուն:

Ունի յաջ մատուռ սուրբ Սարգիս անուն,
Եւ առ իով նորա մատուռ լոյս արբուն,
Փայտաշէն տաճար, սլահէ հաստատուն.
Տես, նէլէր տեսեր նա ի Ղարասուն:

Սրանից հետո էլ միայն, որ նա անցնում է քաղաքի և նրա տեսարժան վայրերի նկարագրությանն ու թվարկմանը, որովհետև, ինչպես ինքն է հայտարարում, «հոգևորից» հետո է միայն արժան «մարմնականի» մասին խոսել:

Բուն քաղաքի նկարագրությունների մեջ, մեր կարծիքով, ամենից ուշագրավն այն է, որ Սսեցին հաճախ հատուկ կերպով կանգ է առնում որոշ վայրերի գործնական ու տնտեսական նշանակության վրա, ցույց տալիս դրանց դերը ժողովրդի կյանքում:

²⁴ Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ աղատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 150:

²⁵ Տե՛ս Մատենադարանի ձեռագիր № 2394, էջ 176ա—179ա և № 3411, էջ 179:

Խի և բեն առու բաժանած ի գետոյն,
Ի շաղագն առնեն աշնան ցորենոյն,
Ետ անցնի վիր 'ի արապանուն.
Տես, նկլէ տեսեր նա ի Ղարասուն:

Խի գետին բեն կողմ շինած դէմ դէմ տուն,
Շէն բարակ կարմունն փայտէ վեր ջրոյն,
Ջուր ժամայնակաւ տաւէր և շատ տուն.
Տես, նկլէ տեսեր նա ի Ղարասուն:

Նկարագրութիւններ յայտնողական բնութիւնը բացի ոտանավորն աչքի և ընկնում նաև մի այլ հետաքրքրական առանձնահատկութիւնով. հեղինակը ոչ մի խոսք չասելով իր թվարկած տնե-րի, միևարեններ, բաղանիւրների և այլ կառույցների ճարտարապետութեան կամ այլ հատկու-թիւնների մասին, կարծես դրանք մի սլա՛ն մոռանալով, մանրամասն և սիրով խոսում է քաղաքի պարտեզներում աճող ծառերի, դրանց տված պտուղների, նույնիսկ այդ պտուղների համ ու հոտի, ապա նաև ծառերի վրա ճովողացող թռչունների կամ ջրերում լողացող սագերի և նման այլ բա-նեքի մասին.

Տունկ և արմտիք և շիւղ յաւառոյն.
Պաղանին յոլով պտուղ ծառերուն.
Համն հոտն գեղեցիկ կարմիր խնձորնուն.
Տես, նկլէ տեսեր նա ի Ղարասուն:

Ունի պոյկիւղէլ զավախ բնդ բարտուն,
Ջագերն շինէր ի ծառերն բուն.
Փոխ փոխ սաղմոսեն նա զիշերն ի բուն,
Տես, նկլէ տեսեր նա ի Ղարասուն:

Այս տիպի նկարագրութիւնները թեև պակասեցնում են նման բնութիւն երկին անհրաժեշտ նոթադրական, ճանաչողական նշանակութիւնը, բայց դրա փոխարեն նրան բանաստեղծականու-թեան երանգ ու գույն են հաղորդում:

Սակեւ այս երկի վրա ուժեղ է եղել ժողովրդական մտածողութեան և ստեղծագործութեան ազդեցութիւնը, այդ երևում է նաև ոտանավորի կառուցման ձևից և լեզվից: Լեզուն այստեղ լրիվ բարբառային է, թուրքերեն բառերի շատ օգտի մեծ խառնուրդով, քան նախորդ ոտանավորնե-րում, այնպես որ հաճախ մթաղնվում է երկի իմաստը: Տաղաչափութեան վրա նույնպես զգացվում է աշուղական արվեստի ազդեցութիւնը:

Այս բանաստեղծութեան հետ իր նյութով ու ոճով սերտորեն առնչվում է նաև «Տաղ ազնիվ ասացնալ Յակոբ վարդապետէ ի վերայ քաղաքին Բուղանդիոյ — և է տունն զարէնֆիլ, ներ-կիզին» խորագրով ոտանավորը²⁶:

Սակեւ այստեղ հենց առաջին քառյակում հայտնում է, որ շայիրական, այսինքն՝ բանաս-տեղծական ձևով պետք է խոսի Կոստանդնուպոլսի մասին: Եվ ինչպես առաջին ոտանավորում էր, այստեղ ևս նա նախ սկսում է Կ. Պոլսի եկեղեցիների, ապա նաև մզկիթների ու միևարենների թվարկումն ու նկարագրութիւնը.

...Բլն դեմ դա էշ զայ եկեղեցի է.
Սուլմանաստիւր սլատրիարգարան է.
Սուրբ Սարգիս Բովն սուրբ Նիկողայոս
սփանշելագործն է.

Այեայ Սօֆին այժմ տաճկաց ճամին է.
Փոխանակ զանկակին մէկիներ կանչէ.
Երկու միեւրէ, մէկ մէկի դեմ է...

Սուրբ Լուսաուրիշ Ղալարիուն է:

Ոտանավորի ընթացքի նմանութիւնը Ղարասուի նկարագիրը տվող երկին մեղ թելադրում է, որ Սակեւն այս երկում պետք է որ անդրադարձած լինի նաև Կ. Պոլսի քաղաքացիական շէնքերի ճարտարապետութեանը և հատկապես քաղաքի բնակիչների տնտեսական վիճակի համար նշա-նակալից կառույցների նկարագրին: Այսինքն՝ որ սրանով ևս, ինչպես Ղարասուի նկարագրութեամբ, Սակեւն շարունակած պիտի լինի հաշտուր Եվդոկացու Վենեսիկը նկարագրող երկով սկզբնա-վորած այն նոր թեմատիկ դիօր, որը XVII դարի բանաստեղծութեան բերած հետաքրքիր և ուշա-գրավ նորութիւններից մեկն էր մեր զրականութեան սլատմութեան մէջ և որը Սակեւը հետո առավել կամ պակաս հաջողութեամբ շարունակեցին XVIII դարի բանաստեղծներ Մարտիրոս Ղրիմեցին, Երեմիա Քյոմուրճյանը, Մինաս Էտրենեցին, Հակոբ Երեց Գրիգորեանը և ուրիշներ:

Հակոբ Սակեւ միակ երկը, որը հորինված է ոչ թե նպատակային ձևով, այլ զգացումնային ներշնչմամբ, «Ա՛յ անդին յոհար» տողով սկսվող բանաստեղծութիւնն է²⁷:

26 Այս ոտանավորի ոչ լրիվ տեքստը բերված է Ա. Սուրմեյանի կազմած Հայկալի մասնավոր ձեռագրերի ցուցակում (տե՛ս թիւցակ հայերէն ձեռագրաց Հայկալի... և մասնաւորաց, էջ 382—383, Տաղարան № 28, թղ. 25):

27 Ձեռագիր № 7717, էջ 196ա—բ և № 7039, էջ 155բ—156ա: Հրատարակված է (7717 ձե-ռագրից, միայն այլ տողամամբ) Կ. Կոստանյանցի «Նոր ժողովածուի»՝ Ի պրակում (Վա-ղարչապատ. 1903, էջ 9—11): Եւր սրինակները բերված են ձեռագրի ձևով:

Սա մի քնարական ստեղծագործություն է, որը դժվար է սովորական սահմանումներով բնութագրել որպես սիրային րանաստեղծություն: Դա յուրօրինակ, ինքնատիպ ստեղծագործություն է, որի մեջ արտահայտված է ոչ թե հեղինակի բուն սիրո, այլ գեղեցիկ, հմայիչ կնոջ հանդեպ տածած հիացքի, գորովանքի զգացումը, սեփական կնոջ մահվանից հետո իր ցաված սիրտն այդ գեղեցկությամբ և, գուցե թե, նոր սիրո ակնկալությամբ ամոքելու ցանկությունը, դրանով վիշտը մոռանալու նրա իղձը, մի բան, որի ապացույցը մենք տեսնում ենք հատկապես րանաստեղծության վերջին տան մեջ.

Ցաւեր է Սըսցին Ձեռ շինե քովին,
Դու աշակերտ էֆլարօնին*.
Դու զնայ քրժըշկէ, Աստուած ըզեզ պահէ:

Իր ժամանակի համար բարդ ու բազմակողմանի, հաճախ իրարամերժ ապրումներ ու խոհեր արտահայտող այս ստեղծագործությունը րանաստեղծական ձևի տեսանկյանից նույնպես ինքնատիպ է: Այսպես. եթե րանաստեղծության յուրաքանչյուր տան առաջին մասում զանազան մակդիրներով ու համեմատություններով արվում է գեղեցիկ կնոջ գովքը, երկրորդ մասում, համարյա համանման բառերի ու մակդիրների միջոցով, մաղթանք-ցանկություն է խելագրվում նրան մի որևէ հաճելի գործողություն կատարելու համար: Օրինակ, եթե առաջին մասում ասում է, թե նա դժվարությամբ գտնված անդին գոհար է, ապա երկրորդ մասում այդ լալ քար ու մարգարտից նրա համար պսակ հյուսելու ցանկություն է հուշում.

Ա՛յ անգին զահար, դու ղրժուար շոտուար,
Պէհէսուն, մարգարիտ, լալ ֆար,
Պսակ զեզ հիւսէ, Աստուած զեզ պահէ:

Եթե սկզբում ասում է, որ նա ոսկի է և շափյուղա, ապա երկրորդ մասում ուզում է, որ դրանցից վերցնի և իր համար մատանի շինի: Կամ եթե ասում է, որ նա բուրաստան է, մուշկ ու ամպարի նման բուրմունք ունի, ապա վերջում ցանկանում է, որ նման և այլ անուշահոտ խեժեր և յուղեր քսի իր երեսին.

Նարդոս, ֆրֆում, եաղ պալասանի.
Երեսը սրբէ, Աստուած զեզ պահէ:

Սսեցու մյուս ոտանավորներին հատուկ լեզվա-ոճական ու րանաստեղծական տարրեր ձևերի գործածման հատկանիշն այս երկում գտել է իր ամենակատարյալ արտահայտությունը: «Ծրգ-երգոցն» ու նրա լեզուն ոտանավորին տվել են «ասող առաւօտեան», «ղաւպաս փղոսկրեան», «հոտ միւշկ ւսմպերխան», «աւֆա զեզ օծէ», «պսակ զեզ հիւսէ», «հիւրիկ զմուռ», «խունկ տաշխ» և այլ լեզվաձևերն ու ավանդական րանաստեղծական մակդիրները, իսկ ժողովրդի լեզուն և ստեղծագործությունը նրա երգը հարստացրել են «սիմպիլ մանուշակ», «ֆիւրֆ դումաշ», «ֆու Բիստա-ուրֆն են ֆեզ դուրպան», «կամար ունէր», «լուսին աշնան», «սամրի մազով», «վաշախի մուրթով» և այլ ու այլ գեղեցիկ ու տիպիկ ժողովրդական արտահայտություններով:

Շատ ավելի են այն հատվածները, որոնցում թե՛ հնից եկած, թե՛ ժամանակի ժողովրդական լեզվաձևերն ու րանաստեղծական հնարանքները նոր համադրությունների, նոր կապակցությունների մեջ են զրկված, որի շնորհիվ րանաստեղծությունը շատ ավանդական բան ունենալով իր մեջ, միևնույն ժամանակ նոր որակ է ստանում, հարստանում նոր նրբերանգներով, այսպես.

Բազմաստեղն նման, դու լուսին աշնան,
Լուս աւեզակ աւե գարնան
Ղեզ լուսաւորէ, Աստուած զեզ պահէ:

Կամ՝

Աստղ առաւօտեան, դաւպաս փղոսկրեան,
Ձեռօք մուրթէ, Աստուած զեզ պահէ,—

տողերում թեև շատ են ավանդական մակդիրները և համեմատությունները, բայց ոտանավորը նոր է, ինքնատիպ և թարմ:

* Պլատոնն է:

Ինչպես իր ժամանակի բազմաթիվ ստեղծագործողներ, Սահյին ևս իր աշխարհընկալման մի շարք կողմերով մոտիկ է եղել ժողովրդին և հաճախ նրա ձևով է ըմբռնել ու վերարտադրել իրականությունը։ Դրա համար էլ նրանից մեզ հասած, դժբախտաբար սակավաթիվ, երկերում մենք համենայն դեպս տեսնում ենք ժամանակի կյանքի որոշ հատվածների ու երևույթների ճշմարտապատում պատկերը, զգում ժամանակի ողին։

Ժողովրդի ու նրա ստեղծագործության հետ ունեցած այդ կապով պետք է բացատրել նաև ժողովրդական լեզվա-մտածողական ձևերի և ստեղծագործական հնարանքների առատությունը Սահյու երկերում, մի հատկանիշ, որ նույնպես տիպական էր այդ ժամանակի բանաստեղծության համար առհասարակ։